

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ապրիլի 2021 թ.

N 342-Ն

ք. Ստեփանակերտ

**ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ (ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԵՎ ԴՐԱՆՑ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՎԱԾ ՏՈԿՈՍՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՉԱՓՈՎ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» օրենքի 13.1-ին հոդվածի 6-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել ձեռնարկատիրական վարկերի (փոխառությունների) և դրանց սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված հարկի գումարների վերադարձման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ծագած հարաբերությունների վրա: Սույն որոշմամբ սահմանված հավելվածով նախատեսված փաստաթղթերը 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմին են ներկայացվում մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, իսկ 2023 թվականի չորրորդ եռամսյակի, երկրորդ կիսամյակի և տարվա համար՝ մինչև 2024 թվականի ապրիլի 20-ը ներառյալ:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ր Գ

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ (ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԵՎ ԴՐԱՆՑ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՎԱԾ ՏՈԿՈՍՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՉԱՓՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են «Հարկերի մասին» օրենքի 13.1-ին հոդվածով սահմանված՝ Արցախի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից կամ պետության ստեղծած հիմնադրամից մինչև 2020 թվականի հոկտեմբերի 1-ը կնքված վարկային (փոխառության) պայմանագրերի հիման վրա ստացված ձեռնարկատիրական վարկերի (փոխառությունների) և դրանց սպասարկման համար վճարված տոկոսների գումարների փոխհատուցման նպատակով կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից օրենքով սահմանված կարգով հաշվարկված հարկի գումարների վերադարձնելու հետ կապված հարաբերությունները: Սույն կարգի կիրառման իմաստով՝ ձեռնարկատիրական վարկ (փոխառություն) են համարվում նաև գյուղատնտեսական վարկը և ֆինանսական վարձակալությունը (լիզինգը):^{*1)}

2. Սույն կարգի գործողությունը տարածվում է Արցախի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության կամ պետության ստեղծած հիմնադրամի հետ մինչև 2020 թվականի հոկտեմբերի 1-ը վարկային (փոխառության) պայմանագիր կնքած վարկառու, համավարկառու և (կամ) երաշխավոր հանդիսացող՝ Արցախի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) և սույն կարգի 3-րդ կետում չնշված կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ հարկ վճարող) վրա՝ հաշվետու եռամսյակում կամ հաշվետու կիսամյակում իրենց անվամբ կատարված վճարմանը համամասնորեն:

3. Սույն կարգի գործողությունը չի տարածվում վարկային կազմակերպությունների, բանկերի, գրավատների, բնական գազի ներկրման, փոխադրման, բաշխման և գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայությունների մատուցման, էլեկտրական էներգիայի ներկրման, հաղորդման,

բաշխման և արտահանման, մետաղական օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) մետաղի խտանյութի արտադրության (վերամշակման) լիցենզավորված գործունեություն իրականացնող հարկ վճարողների վրա:

4. Սույն կարգի համաձայն՝ վերադարձման ենթակա են հարկ վճարողների կողմից հաշվետու եռամսյակում կամ հաշվետու կիսամյակում հաշվարկված հետևյալ հարկերի հանրագումարի 50 տոկոսը, բայց ոչ ավելի, քան ձեռնարկատիրական վարկի (փոխառության) և դրա սպասարկման համար վճարված տոկոսների գումարը՝

- 1) շահութահարկ.
- 2) եկամտային հարկ.
- 3) ակցիզային հարկ.
- 4) ավելացված արժեքի հարկ.
- 5) հաստատագրված վճարներ.
- 6) առևտրի հարկ:

5. Սույն կարգի 4-րդ կետով սահմանված հարկերի գումարի մեջ չեն ներառվում շահութահարկի և եկամտային հարկի կանխավճարները, եկամտային հարկի նվազագույն վճարները:

6. Սույն կարգի 4-րդ կետով սահմանված հարկերի գումարը հաշվարկելիս հաշվետու եռամսյակում կամ հաշվետու կիսամյակում առաջացած ավելացված արժեքի հարկի դեբետային մնացորդը հաշվի չի առնվում (հաշվարկին չի մասնակցում):

7. Հարկ վճարողի կողմից տարեկան արդյունքներով հաշվարկված շահութահարկի (եկամտային հարկի) գումարը հաշվի է առնվում հաշվարկի ներկայացման ամսաթիվը ներառող հաշվետու եռամսյակում կամ հաշվետու կիսամյակում, բայց ոչ ուշ, քան հաշվարկի ներկայացման օրենքով սահմանված վերջնաժամկետը:

8. Վերադարձման ենթակա հարկի գումարի մեծությունը որոշվում է սույն կարգի 4-րդ կետում նշված հաջորդականությամբ:

9. Սույն կարգի 4-րդ կետով սահմանված հարկերի գումարը, վարկային (փոխառության) պայմանագրի համաձայն, ամսական կամ եռամսյակային վճարումներ կատարող հարկ վճարողներին ենթակա են վերադարձման եռամսյակային, իսկ վարկային (փոխառության) պայմանագրի համաձայն՝ կիսամյակային վճարումներ

կատարող հարկ վճարողներին, ինչպես նաև կիսամյակային հաշվարկ-հաշվետվություն ներկայացնող անհատ ձեռնարկատերերին՝ կիսամյակային պարբերականությամբ:

10. Եթե հաշվետու եռամսյակի կամ հաշվետու կիսամյակի (այսուհետ՝ հաշվետու ժամանակաշրջան) համար հարկ վճարողը սույն կարգի 4-րդ կետում նշված հարկերի վճարումներն ամբողջությամբ չի կատարել կամ կատարել է մասնակի, ապա հարկի գումարները վերադարձվում են այդ գումարների ամբողջական կատարումից հետո՝ հարկ վճարողի կողմից սույն կարգով սահմանված փաստաթղթերը ներկայացվելու դեպքում:

11. Ստացված ձեռնարկատիրական վարկերի (փոխառությունների) և դրանց սպասարկման համար տոկոսների գումարների փոխհատուցման համար առաջին անգամ հարկի գումարների վերադարձման նպատակով հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը և դրանց պատճենները՝

1) հարկի գումարների վերադարձման համար հարկային մարմնի ղեկավարի կողմից սահմանված ձևի դիմում՝ հարկ վճարողի անվանման (անուն, ազգանուն), հարկ վճարողի հաշվառման համարի (այսուհետ՝ ՀՎՀՀ), գտնվելու (բնակության) վայրի հասցեի, կոնտակտային տվյալների, հարկ վճարողին վերադարձվող հարկի գումարները փոխանցելու համար բանկի անվանման և հաշվի համարի նշումով.

2) Արցախի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության կամ պետության ստեղծած հիմնադրամի հետ մինչև 2020 թվականի հոկտեմբերի 1-ը կնքված վարկային (փոխառության) պայմանագրի՝ նոտարական կարգով վավերացված պատճեն: *Արցախի Հանրապետության բռնազավթված տարածքներում գործունեություն իրականացրած Արցախի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության հետ մինչև 2020 թվականի հոկտեմբերի 1-ը կնքված վարկային պայմանագրի կորուստով պայմանավորված՝ դրա նոտարական կարգով վավերացված պատճենի ներկայացման անհնարինության դեպքում հիմք է ընդունվում Արցախի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության կողմից տրված տեղեկանքը, որում ներառվում են ձեռնարկատիրական վարկ տրամադրած Արցախի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության ֆինանսական կազմակերպության անվանումը, հարկ*

վճարողի անվանումը (անունը, ազգանունը), վարկային պայմանագրի (այդ թվում՝ փոփոխությունների) կնքման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը, համարը, գործողության ժամկետը, վարկի տեսակը, նպատակը, արժույթը, գումարը, տարեկան փաստացի տոկոսադրույքը, սուբսիդավորվող տոկոսադրույքը, վարկի և տոկոսների մարման հաճախականությունն ու վճարման կարգը.^{*3)}

3) ձեռնարկատիրական վարկերը (փոխառությունները) տրամադրած Արցախի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության կամ պետության ստեղծած հիմնադրամի կողմից տրված՝ հարկային մարմնի ղեկավարի կողմից սահմանված ձևի տեղեկանք՝ հաշվետու ժամանակաշրջանում հարկ վճարողի կողմից ձեռնարկատիրական վարկերի (փոխառությունների) և դրանց սպասարկման համար հաշվեգրված տոկոսների գումարների մարումների մասին:

12. Հետագա հաշվետու ժամանակաշրջաններում վճարված հարկի գումարները վերադարձնելու համար հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում սույն կարգի 11-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերը, եթե մինչև այդ ներկայացված՝ սույն կարգի 11-րդ կետի 2-րդ ենթակետով պահանջվող տեղեկատվությունը մնացել է անփոփոխ:

13. Սույն կարգի 11-րդ կետում նշված փաստաթղթերում առկա տեղեկատվության փոփոխությունների դեպքում հարկ վճարողը պարտավոր է մինչև հարկի գումարների վերադարձման համար հերթական դիմումի ներկայացումը հարկային մարմին ներկայացնել փոփոխությունները հավաստող փաստաթղթերը:

14. Հարկի գումարների վերադարձի մասին դիմումը մերժվում է, եթե՝

1) այն ներկայացնելու պահին հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված՝ սույն կարգի 4-րդ կետով սահմանված հարկերի հաշվարկներով հայտարարագրված հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարված չեն:

2) չեն ներկայացվել սույն կարգի 10-րդ, 11-րդ և 13-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը:

15. Հարկի գումարների վերադարձի մասին դիմումը հարկային մարմնի կողմից մերժվելու դեպքում դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող ութ աշխատանքային օրվա ընթացքում հարկ վճարողը ծանուցվում է մերժման հիմքերի մասին:

16. Հարկի գումարների վերադարձման մերժման հիմքերի բացակայության դեպքում հարկային մարմնի՝ հարկ վճարողների սպասարկման գործառույթ իրականացնող ստորաբաժանումը դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող ութ աշխատանքային օրվա ընթացքում կազմում է վերադարձվող հարկի գումարների վերաբերյալ հարկային մարմնի ղեկավարի կողմից սահմանված ձևի եզրակացություն և ուղարկում է հարկային մարմնի՝ հարկի գումարների վերադարձման գործառույթ իրականացնող ստորաբաժանում՝ եզրակացությունների հիման վրա վերադարձը, «Հարկերի մասին» օրենքով սահմանված պահանջներին համապատասխան, կատարելու հանգամանքներն ստուգելու և հաշվառում իրականացնելու համար:

17. Կատարվող վերադարձը հարկային մարմնի՝ հարկի գումարների վերադարձման գործառույթ իրականացնող ստորաբաժանման կողմից ընդունվելու դեպքում ոչ ուշ, քան եզրակացությունն ստանալու օրվան հաջորդող ութերորդ աշխատանքային օրը Արցախի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի^{*2)} նախարարության գանձապետարան է ներկայացվում վճարման հանձնարարական: Հարկային մարմնի՝ հարկի գումարների վերադարձման գործառույթ իրականացնող ստորաբաժանման կողմից հարկի գումարների վերադարձը մերժվելու դեպքում եզրակացությունը ստանալու օրվան հաջորդող ութ աշխատանքային օրվա ընթացքում՝ եզրակացությունը՝ մերժման հիմքերի նշումով, վերադարձվում է այն ներկայացրած հարկային մարմնի՝ հարկ վճարողների սպասարկման գործառույթ իրականացնող ստորաբաժանում՝ մերժման հիմքերի մասին հարկ վճարողին ծանուցելու համար:

18. Վերադարձվող գումարը հարկ վճարողին փոխանցելու նպատակով հարկային մարմնի կողմից Արցախի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի^{*2)} նախարարության գանձապետարան ներկայացվող վճարման հանձնարարականում նշվում են հետևյալ տվյալները՝

1) կազմակերպության անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը.

2) ՀՎՀՀ-ն.

3) հաշվետու ժամանակաշրջանը, որին վերաբերում է վերադարձվող գումարը.

4) հարկ վճարողի բանկային հաշվի համարը և բանկի անվանումը.

5) տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար վերադարձվող գումարի վերաբերյալ կազմված եզրակացության համարը.

6) վերադարձվող գումարի չափը և *գանձապետական ենթահաշիվը, որից*^{*2)} պետք է վերադարձվի գումարը:

19. Վճարման հանձնարարականը ներկայացվելու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, վերադարձվող գումարը փոխանցվում է հարկ վճարողի բանկային հաշվին:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

*1) ԱՀ կառավարության 19.11.21թ. «Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 20-ի N 342-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1250-Ն որոշման խմբագրությամբ (Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:)

*2) ԱՀ կառավարության 29.09.22թ. «Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 20-ի N 342-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» N 1085-Ն որոշման խմբագրությամբ (Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:)

*3) ԱՀ կառավարության 19.10.22թ. «Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 20-ի N 342-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» N 1142-Ն որոշման խմբագրությամբ